ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 269-Լ

«26» ՕԳՈՍՏՈՍԻ 2024թ.

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 66 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N-919-Ն որոշման պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել <<ՀՀ տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի կողմից իրականացվող գործողությունների պլանը>> համաձայն 1-14 հավելվածների:

ՑԱՆԿ

Վայոց ձորի մարզպետի որոշման հավելվածների

1.ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի գործողությունների պլան՝ N 1 հավելված.

2.ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը՝ ըստ MSK-64 սանդղակ՝ N 2 հավելված.

3.Վայոց ձորի մարզի ղեկավար կազմի ազդարարման սխեմա՝ N 3 հավելված.

4.Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեմա՝ N 4 հավելված.

5.Հետախուզության կառավարման սխեմա՝ N 5 հավելված.

6.Երկրաշարժի հետևանքների վերացման պլան-ժամանակացույց՝ N 6 հավելված

7.Վայոց ձորի մարզում ստեղծված փրկարար ուժերի և առկա ինժեներական տեխնիկայի հաշվարկը ըստ համայնքների՝ N 7 հավելված.

8.Վայոց ձորի մարզի կազմակերպություններում ստեղծված փրկարար ուժերի և առկա ինժեներական տեխնիկայի հաշվարկ՝ N 8 հավելված.

9.Ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի համայնքներում իրականացվող փրկարարական աշխատանքների համար անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկ՝ N 9 հավելված.

10.Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի հաշվարկ՝ N 10 հավելված.

11.Ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի բնակավայրերի անօթևան մնացած բնակչության տարահանման և կացարաններով ապահովման հաշվարկ՝ N 11 հավելված.

12. Ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի տուժած բնակչության և փրկարարական ուժերի՝ սննդով ապահովման հաշվարկ՝ N 12 հավելված.

13.Ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկ՝ N 13 հավելված.

14.Ուժեղ երկրաշարժի դեպքում Վայոց ձորի մարզի բժշկական ապահովման ուժերի հաշվարկ՝ N 14 հավելված.

2.Որոշման կատարման հսկողությունը դնել Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանի վրա :

3.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 6-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի գործողությունների պլանը հաստատելու մասին» N 66 որոշումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր